

Արշակ Փոլադյան¹
Արթուր Բարսեղյան²

ՀԱՅՈՑ ՋԱՐԴԵՐԸ ՖԱՅԵԶ ԱՎ-ՂՈՒՍԵՅՆԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Բանալի քառեր՝ Օսմանյան Կայսրություն, Թուրքիա, Ֆայեզ ալ-Ղուսեյն, ակնանատես, Հայոց ցեղասպանություն, ջարդեր, գաղթ, հայեր, թուրքեր

Հայոց ցեղասպանության վերաբերյալ հազարավոր աղբյուրների և պատմական փաստաթղթերի կազմում քիչ թիվ չեն կազմում արաբալեզու անտիպ վկայություններն ու հուշագրությունները, որոնց որոշակի մասն ցայսօր անհայտ են մնում լայն գիտական շրջանակներին: Դրանցից որոշները արաբերեն բնագրեր են և որպես սկզբնաղբյուր արևելահայերենով ներկայացված չեն: Սույն հոդվածը վերաբերում է սիրիացի արաբ փաստաբան, մտավորական, Հայոց ջարդերի ականատես Ֆայեզ իբն Չաալ ալ-Ղուսեյնի³ (1883-1968թթ.) հուշերին, որոնք տեղ են գտել նրա հույժ կարևոր նշանակություն ունեցող «**Չարդերը Հայաստանում**» աշխատության մեջ⁴: Բազմաթիվ կարծիքներ համադրելով կարելի է եզրակացնել, որ Ֆ. ալ-Ղուսեյնի սույն աշխատությունը արաբերեն առաջին անգամ լույս է տեսել 1916 թվականի աշնանը Կահիրեում և հետագայում հրատարակվել մի քանի լեզուներով: Չ. Կիրակոսյանը նշում է, որ արաբ ականատեսի վկայությունները որպես ամփոփ աշխատություն հետագայում լույս է տեսել Բոմբեյում 1916 թվականի սեպտեմբերի 21-ին, որը թարգմանվել և տպագրվել է ԱՄՆ-ում «Նահատակ Հայաստան» վերնագրով⁵:

Ֆ. ալ-Ղուսեյնը իր հուշերում նկարագրում է 1915 թ. օգոստոսից մինչև 1916 թ. փետրվար ամիսը երիտթուրքերի բռնատիրական և դաժան քաղաքականության զոհ դարձած արևմտահայության խնդիրները, Հայոց

¹ Թունիսում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, պ.գ.դ., պրոֆեսոր, էլ. փոստ a.poladian@mfa.am

² ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ., ԵՊՀ պրոռեկտոր, էլ. փոստ՝ israyelyan@ysu.am

³ Ականատես Ֆայեզ իբն Չաալ ալ-Ղուսեյնը ծնվել է Սիրիայի Հորանի նահանգի ալ-Լեջաթի շրջանում, եղել է տեղի բեդվին աս-Սուլլութ ցեղի առաջնորդի զավակը: Տե՛ս **Փոլադյան Ա., Սարգսյան Լ.**, Սիրիայի արաբ ականատես Ֆայեզ ալ-Ղուսեյնի հուշերը Հայոց ցեղասպանության մասին, Դամասկոս, 2017, էջ 24:

⁴ Աշխատության վերաբերյալ կարծիք-գրախոսականի մասին տե՛ս <http://publications.yso.am/wp-content/uploads/2018/03/33graxosutyun-Israyelyan-A.pdf>

⁵ **Կիրակոսյան Չ.**, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1983, էջ 65:

ցեղասպանության⁶ կազմակերպիչներին, սպանդի եղանակներին և մեթոդներին, հետևանքներին և այդ հրեշավոր ոճրագործության զանազան մանրամասներին: Հակաթուրքական արաբական գաղտնի կազմակերպությանն անդամակցելու մեղադրանքով ձերբակալված Ֆայեզ ալ-Ղուսեյնը, ինչքան էլ որ վերջինս հերքել և չի ընդունել իր դեմ հարուցված մեղադրանքները, այնուամենայնիվ եղել է անդամ և հարել է վերոհիշյալ կազմակերպությանը⁷: Հետագայում բավարար ապացույցներ չլինելու պատճառով Ֆ. ալ-Ղուսեյնը Ջեմալ փաշայի հրամանով արքտրվում է Էրզրում, այնտեղից էլ Դիարբեքի⁸:

Ըստ էության Ֆ. ալ-Ղուսեյնի հուշագրությունը բացի արքտրի ժամանակ իրականացված սպանդի տեսարանների նկարագրությունից, առավելապես կենտրոնանում էր Դիարբեքիի վիլայեթում տեղի ունեցող իրադարձությունների վրա: Նրա հուշերում իրադարձությունների մասին պատմող անձանց գերակշռող մասը Դիարբեքիի և նրա շրջանների, Վանի, Մուշի, Բիթլիսի, Մասամուրաթ ալ-Ազիզի, Հալեպի և Էրզրումի բարձրաստիճան պաշտոնյաներ էին, սպաներ և անվանի մարդիկ:

Չարդերի կազմակերպիչներն ու իրականացնողները. Թե ինչ մեթոդներով պետք է իրականացվեին Չարդերը կներկայացնենք ստորև ակնաստեսի հուշերում, բայց մի բան պարզ է, որ օսմանյան կառավարությունը հայերի՝ Թուրքիայում սպրեղու և արարելու հարցը գերօրակարգային հարց էր դարձրել: Սակայն դիմելով հայերի ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթերին, հայտնաբերված և հրապարակված մի շարք գաղտնի հեռագրերին, 1915 թվականի սեպտեմբերի 9-ին Թալեաթի հեռագրում, որն ուղղված էր Հալեպի կառավարչին կարդում ենք հետևյալը. «Հայերի՝ Թուրքիայում սպրեղու իրավունքը պետք է իսպառ վերացնել: Կառավարությունն ամբողջությամբ ստանձնում է դրա պատասխանատվությունը»⁹: Այստեղ հարկ ենք համարում փոքրիկ անդրադաձ կատարել պատմության կեղծարարներին, ովքեր պնդում են, որ Հայոց Ցեղասպանության հիմնական պատճառը իբր թե եղել է 1914 թվականին կազմակերպված հայկական կամավորական ջոկատների հակաօսմանյան գործունեությունը և Վանի հայության 1915 թվականի ապստամբությունն ուղղված տիրող կարգերի դեմ: Սակայն

⁶ Հատկանշական է, որ Ֆ. ալ-Ղուսեյնը իր հուշերում օգտագործում է ցեղասպանության բառի արաբերեն համարժեք եզրը «الابادة», որը համարժեք է միջազգային Genocide տերմինին: St'u 67-66 ص 1، فائز الغصين: مذكراتي عن الثورة العربية، ج 1

⁷ **Փոլադյան Ա., Սարգսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 24:

⁸ Նույն տեղում, էջ 29:

⁹ **Բաում Վ.**, Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, Երևան, 2010, էջ 80:

պատմությունը արձանագրել է, որ Վանի հայերը ոչ թե ապստամբել են, այլ դիմել են ինքնապաշտպանության: Ուստի օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի»¹⁰ մասին Մ. Ներսիսյանը շատ հստակ նշում է, որ հարկ է հանգամանալից անդրադառնալ այդ պետության ամբողջ գոյության ընթացքում իրեն հպատակ ժողովուրդների և ազգությունների դեմ տեղի ունեցած հալածանքներին, կեղեքումներին, կոտորածներին և դրանք իրականացնողներին, իսկ հայերի դեմ գործադրած դաժանությունների մասին անդրադառնում Ֆ. ալ-Ղուսեյն հեղինակին. «*Հայերի դեմ գործադրած դաժանությունների պատասխանատվությունը ընկնում է «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխների վրա»*¹¹: Պետք է հստակ արձանագրել, որ մինչև 1907 թվականը հազարավոր հայեր սպանվել են, ենթարկվել են անբացատրելի հալածանքների, սակայն այժմ մոլեռանդ երիտթուրքական իշխանավորների նպատակը որոշակիորեն այլ էր. մի ամբողջ ժողովրդի բնաջնջումը՝ ռասիստական հիմնավորումներով: Ինչպես նշում է Վ. Բաումը, «Սա որակապես բոլորովին նոր երևույթ էր, որը հնարավոր չէ համեմատել օսմանյան կայսրության սուլթանական շրջանի կոտորածների հետ»¹²: Շարունակելով նկարագրել երիտթուրքերի կողմից իրականացվող ծրագրերը՝ Ֆ. ալ-Ղուսեյնը իր հուշերում գրում է. «*Հրամանի կատարման համար Դիարբեքիի վալի նշանակվեց ազգությամբ չեղքեզ Ռաշիդ բեյը, ով ուներ լայն լիազորություններ և իր ենթակայության տակ կային մարդասպաններ՝ Դիարբեքիի ոչ կանոնավոր զորքի հաստակ կազմակերպության ղեկավար չեղքեզ բեյ Ահմադ սա-Սարարիին, Դիարբեքիում ժանդարմների հրամանատար Ռուշիդ բեյը և Բալիկ բեյը»*¹³:

Չանգվածային ոչնազման մեղադրանք. Սպանելու և բնաջնջելու ձևերը բազմազան էին: Այս առիթով Ֆ. ալ-Ղուսեյնը գրում է. «*Հայերին*

¹⁰ «Բոլոր նրանք, ովքեր խոսում են օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին՝ պատմության բացահայտ կեղծարարներ և ստախոսներ են, նրանց քարոզները ոչ մի առնչություն չունեն ճշմարտության հետ»: Տե՛ս **Ներսիսյան Մ.**, Հայոց Ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005, էջ 80: Թուրքական կառավարությունը շատ լավ հասկանում էր, որ օրերից մի օր Եվրոպական տերությունները տեղեկանալու էին Հայոց ջարդերի մասին և տարբեր «բեմադրություններ» էին կազմակերպում, որի մասին հիշում է Ֆ. ալ-Ղուսեյնը. «Հայ սպանված տղամարդկանց գլխին փաթեթներ հագցրեցին, որից հետո եկան լացող, ճչացող քուրդ կանայք, ասելով, որ հայերը սպանել են իրենց ամուսիններին...», սպա լուսանկարիչ բերեցին նկարելու կանանց, որպեսզի համոզեն Եվրոպային, թե հենց հայերն են հարձակվել քրդերի վրա և սպանել և այդ կոտորածներին թուրքական պետությունը որևէ առնչություն չունի»: Տե՛ս **Փոլադյան Ա., Սարգսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 101:

¹¹ **Փոլադյան Ա., Սարգսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 40:

¹² **Բաում Վ.**, նշվ. աշխ., էջ 80:

¹³ **Փոլադյան Ա., Սարգսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 135-136:

մահվան մատնեղը վրդովեցուցիչ, ահավոր դաժանություն էր... նրանց բնաջնջելու եղանակները տարբեր էին. Բիջոխում իշխանությունները հայերին լցնում էին մեծ, հարողով լի մարագները, որնեղը պատում ծղոտով և կրդեհում...: Մուշում սպանում էին գեղակներով, դաշույններով և դանակներով: Բշխանությունները վարձում էին մսագործների, որոնք մարդասպանի արհեստի համար օրական ստանում էին մեկ ոսկի...: Դիարբեքիրում իշխանությունները հայերին սպանում էին մեղր իրով, մեղր թրով: Հանախ նրանց խուճբ-խուճբ նետում էին ջրհորները կամ փոսերի մեջ ու ողջ-ողջ թաղում: Ճատ հայեր ջրահեղձ են արվել Տիգրիսում և Եփրատում...: Ժանդարմները ուրիշ եղանակ էլ էին կիրառում: Նրանք կանանց և երեխաներին կապում էին իրար և մեծ բարձրությունից ցած նետում..¹⁴»: Այս մեթոդները տարածվում էին բոլորի վրա անկախ սեռից և տարիքից, բացառությամբ երբեմն գեղեցիկ դեռահաս աղջիկների, որոնց կնություն էին վերցնում կամ օգտագործում որպես աղախիկներ: Ուրֆայի և Սևերեքի միջև գտնվող Կարա-ջուր բնակավայրի մոտ տեղի ունեցած սարսազողու տեսարանների մասին ականատեսը գրում է հետևյալը. «Գետնին մեջքի վրա պառկած էր կիսամերկ մի կին, արնաթաթախ շապիկով, հրագեղնից ստացած չորս գեղակներով կրծքին և կրծքի տակ: Տեսա մոտ ութ տարեկան մի տղայի՝ կացնով փեղկված զանգով և երեսնիվայր ընկած¹⁵»: Սևերեքից Դիարբեքի ճանապարհին Ֆ. ալ-Ղուսեյնը իր հուշերում գրում է. «Ճանապարհին մեր առջև բացվեց ահավոր տեսարան: Ճանապարհի երկու կողմում ընկած էին մեծ քանակով դիակներ: Այստեղ ընկած էր մի կին, որի երկար վարսերը ծածկում էին մարմնի կեսը, այնտեղ՝ մի ուրիշը բերանքսիվայր: Տղամարդկանց արևից չորացած դիակները ածուկի պես սևացած էին: Որքան մոտենում էինք Սևերեքին, այնքան ավելանում էր դիակների քանակը, հատկապես մանուկների... Մենք գիշերեցինք Սևերեքում և մյուս առավոտ ճանիս ընկանք: Մինչև Դիարբեքի հասնելը, մենք ճանապարհին հանդիպեցինք հայ կանանց քարավանի, որոնց ժանդարմների պահակախմբի հսկողությամբ քում էին դեպի Սևերեք: Նրանք այնպիսի հուսահատ ու թշվառ տեսք ունեին, որ այդ տեսարանը կշարժեր անզամ քարերի գույրը և կարեկցություն կառաջացներ նույնիսկ վայրի զազանների մոտ: Ինչի՞ համար էին նրանց դատասպարտել այդպիսի ճակատագրի: Ինչ հանցագործություն էին կատարել այդ կանայք: Մի՞թե նրանք պատերազմել են թուրքերի դեմ, կամ սպանել գեթ մեկ հոգու նրանցից: Ել ի՞նչում է կայանում այս անօգնական արարածների հանցանքը: Նրանց միակ մեղքն այն էր, որ

¹⁴ **Ներսիսյան Մ.**, Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1991, էջ 439:

¹⁵ **Нерсисян М.**, Геноцид армян в Османском империи, Сборник документов и материалов, Ер., 1966, с. 356-357:

նրանք հայտնիներ էին, որոնք գիտեին իրենց գործն ու տնտեսությունը, դաստիարակում էին իրենց երեխաներին, և երբեք չէին հետաքրքրվում ուրիշ ոչնչով, բացի ընտանեկան հարմարավետություն ստեղծելուց իրենց ամուսինների և զավակների համար և իրենց պարտականությունը կատարելուց...: Ամեն տեղ դիակներ. այստեղ մի տղամարդ է կրծքից զարնված, այնտեղ՝ կին հոշոտված մայրնույլ. կողքին հավերժական քնով քնած երեխա. քիչ այն կողմ՝ մի մատղաշ աղջիկ, որ ձեռքերով ծածկել է իր մեղկությունը¹⁶»: Շարունակելով դաժանությունների մասին իր հուշերը, Ֆ. ալ-Ղուսեյնը գրում է. «Հասնելով Ղարա Բունար ոչ մեծ ջրանցքին, մենք հանդիպեցինք սպանելու և զագանության մի այլ մեթոդի: Մենք տեսանք ամբողջովին այրված դիակներ: Ընկ միայն ամենատես Տիրոջն է հայտնի, թե քանի-քանի երիտասարդներ ու զեղեցիկ աղջիկներ որ կարող էին միախորել իրենց կյանքը, կենդանի կերպով կրակի են մատնվել այս վայրում: Մենք չէինք կարծում, որ դիակներ կգտնենք Դիարբեքիի պարիսպների մոտ: Սակայն ամբողջ ճանապարհի, մինչև քաղաքի դարպասները ծածկված էր նրանցով: Ինչպես ես հետագայում իմացա եվրոպացիներից, այն բանից հետո միայն, երբ եվրոպական թերթերը խոսեցին այդ մասին, կառավարությունը հրաման տվեց թաղել սպանվածների դիակները¹⁷»:

Հատրի հայրենասիրությունն ու քաջասիրտությունը. Իր հուշերում Ֆ. ալ-Ղուսեյնը ժամանակ առ ժամանակ անդրադառնել է հայերի հայրենասիրությանն ու այլ որակներին, հատկապես կանանց առաքինությանը: Համարձակության և արիության օրինակ է բերում Ստամբուլը ներկայացնող հայ երեսփոխան Չոհրասի և նրա ընկերոջ Վարդգեսի խոշտանգումը, որտեղ ականատես-մտավորականը մասնավորապես նշում է. «Վարդգեսը Աստոծ ամենահամարձակ ու քաջ արարածներից էր, գիտատիրում էր հայ սպասուկներին, և մերժել էր սուլթան Աբդ ալ-Համիդի կողմից նրան ներում շնորհելու առաջարկը՝ ասելով, որ ես խիղճս չեմ վաճառի պաշտոնի համար¹⁸»: Ֆ. ալ-Ղուսեյնը Դիարբեքիի Դաշնակցության բյուրոյի անդամ Տիգրանի մասին գրում է հետևյալը. «Կառավարությունը նրան կոտանքների էր ենթարկել, քաշելով եղունգներն ու հանելով թարթիչները, սակայն Տիգրանը նախընտրել էր մեռնել և որևէ գաղտնիք չտրամադրել կառավարությանը¹⁹»: Շարունակելով հայ բանտարկյալների մասին հիշողությունները, Ֆ. ալ-Ղուսեյնը հաղորդում է փոխանցում Հակոբ Կայթանջյան հայրենասերի մասին, որտեղ մասնավորապես գրում է. «Հակոբին ոստիկանությունում կոտանքների են

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 356-357:

¹⁸ **Ա. Փոլադյան, Լ. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 63:

¹⁹ Նույն տեղում, էջ 75:

ենթարկել և ստիպել են պատմել հայկական կազմակերպության և ֆիդայիների մասին, սակայն նա խնդրել է պետքարան զնայ, խոստանալով վերադառնալ և պատմել իր ողջ իմացածը: Վերադառնալով նա ուստիկանապետի երեսին է շարտել իր կտրած սեռական օրգանը: Այս պատմությունը Հակոբը խնդրել է ինձ հրատարակել ԱՄՆ-ում լույս տեսնող «Լայթան» թերթում²⁰:

Շարունակելով հիշողությունները տեղի հայ բնակչության հայրենասիրության և քաջասրտության մասին Ֆ. ալ-Ղուսեյնի հաղորդումները՝ պետք է ևս մեկ անգամ փաստել, որ հայերից շատերը զենք էին հավաքել, թեև քրիստոնյաներին արգելված էր զենք կրել: Օսմանյան կառավարության ամբողջ պետական սպարատը լծված էր հայ բնակչության զինաթափման գործին, ուստի կառավարությունը ժանդարմների և ոստիկանության ջոկատներ էր ուղարկել Ուրֆայի հայկական թաղամասեր՝ բնակչությունից զենքը բռնագրավելու համար, սակայն հայերը հրաժարվել էին և դիմադրության արդյունքում սպանել մեկ ոստիկանի և երեք ժանդարմի: Այս առիթով Ֆ. ալ-Ղուսեյնը գրում է. «Միրհայի հայտնի դահիճ Չամալ փաշայի հրամանով պատեղ ժամանեց Ֆահրի փաշան..., նա հողին հախասարեցրեց հայկական թաղամասերը, սպանեց տղամարդկանց, երեխաներին և շատ կանանց²¹»: Հեղինակը ցեղասպանության դեպքերը նկարագրելիս, ինչպես ինքն է նշում, շատ հաճախ չի կարողացել զգալ հուզմունքը՝ հատկապես հայ կանանց առաքինության մասին խոսելիս. «Անսպասույին տարածքներում թուրքերը հայ հողի կանանց ջրի տեղը ցույց են տվել միայն գունաւոր ստանալուց հետո..., հողի կանայք ծննդաբերում էին անսպասույթին, իրենց նորածիններին թողնելով աննարդաբնակ և անայի վայրերում..., ոմանց էլ մայրական սերը թույլ չէր տալիս զավակներից հեռանալ, գոհվում էին անսպասույթում չքրելով նրանց²²: Ծատ կանայք ընկան տզեռ քրդերի ձեռքը, որոնք գիշատիչ զազանների պես սպրում էին անտառներում, պղծեցին նրանց պատիվը..., շատերը նրանցից գոհվեցին բռնի ու դաժան ձևով, շատերն էլ ինքնասպանություն գործեցին՝ իրենց պատիվը չհանձնելով այդ վայրագ գայրերին»:²³ Կրծքահասակ մանուկը գրկին մի հայ կնոջ անելանելի վիճակի մասին է հիշատակում Ֆ. ալ-Ղուսեյնը, որը տեղի է ունեցել Դեր-Չորում. «Կինը շրջում էր Դեր Չորում՝ հաց մուրալով անցորդներից իր քաղցը հագեցնելու համար..., իշխանության սահից ոչ ոք նրան չօգնեց..., այսպես երեք օր ոչինչ չտանելով իր

²⁰ Նույն տեղում, էջ 76:

²¹ Նույն տեղում, էջ 63:

²² Նույն տեղում, էջ 67:

²³ Նույն տեղում, էջ 62:

մանկահասակ երեխային թողեց Դեյր Չորի շուկայում և նետովեց Եփրատ գետը՝ նախընտրելով խեղդամահ լինել, քան գրկանքներ կրել²⁴»:

Ինչպես նշում է Ա. Փոլադյանը, Ֆ. ալ-Դուսեյն ականատեսը, ով նկարագրել է 1915 թ. օգոստոսից մինչև 1916 թ. փետրվար ամիսը երիտթուրքերի դաժան քաղաքականության արդյունքում տեղի ունեցած դեպքերը, որոշել է հայոց ողբերգությանը հաղորդակից դարձնել արաբա-մուսուլմանական աշխարհին, քանի որ հայերն ու արաբներն ունեին զրեթե նույն ճակատագիրը, այսպիսով իր մարդասիրական պարտքը կատարելով ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի նկատմամբ²⁵:

ПОГРОМЫ АРМЯН В ПАМЯТИ ФАЙЕЗА ЭЛЬ-ГУСЕЙНА

Аршак Поладян, Артур Исраелян

(Резюме)

В этой статье мы исследовали вторую важную работу свидетеля резни в Армении, арабского адвоката из Сирии Файеза эль-Гусейна (1883-1968). В статье особое внимание уделяется проблемам населения Западной Армении, которое становится жертвой репрессивной и жестокой политики младотурок в городах и поселках Сирии, организаторам и исполнителям Геноцида армян, способам и методам уничтожения, последствиям и различным случаям этого чудовищного преступления. Работа Файез эль-Гусейна в очередной раз нам показывает патриотизм и мудрость армян, знакомит с преданным образом армянского воина.

MASSACRES OF ARMENIANS IN FAIZ EL-GHUSEIN'S MEMOIRS,

Arshak Poladian, Artur Israyelyan

(Summary)

The present study deals with the work of significant importance by Faiz El-Ghusein (1883-1968), a Syrian Arab lawyer, an eyewitness of Armenian massacres. The article particularly focuses on the problems of Western Armenians who were the victims of authoritarian and atrocious policy of Young Turks in Syrian towns and villages in the period between August 1915 and February 1916. It touches upon the organizers and perpetrators of the Armenian Genocide, the modes and ways of their extermination, the consequences and numerous acts of this flagrant crime. Faiz El-Ghusein exposes the Armenian patriotism and wisdom, and depicts the image of a devoted Armenian fighter.

²⁴ Նույն տեղում, էջ 99:

²⁵ Նույն տեղում, էջ 39: